

Վարկի անվանական և փաստացի տոկոսադրույք

Վարկի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով եվ սահմանված ժամկետներում կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{\left(1 + i\right)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

K_n - կրեդիտի մարմանն ուղղված n -րդ վճարի գումարը

D_n - կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n -րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ եղանակով

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Կրեդիտի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ

Ժամկետ՝ 24 ամիս

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 16%

Մարման տեսակ՝ անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 17.1%:

Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբերվել վերոնշյալ օրինակից՝ կախված վարկի գումարից, ժամկետից, մարումների հաճախականությունից, ինչպես նաև օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններից: